65. ԼԱԼ ՂԱՄԱՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մե քաղաքում աբրում էր մե բարեպաշտ մարթ: Էս մարթի կնիկը մեռեր էր: Ուներ մե տղա ու մե աղջիկ: Էլ կնիկ չէր առե, որ տան մեչը խորթություն չըքցա: Տան մեչի գործերը աղջիկն էր անում: Աղջկա անունը Ղամար էր: Ղամարը լվացքն էր անում, տունն էր ավլում, խացն էր թխել տալում, ծաղիկներն էր ջրում ու էլի տան ու դսի չատ գործեր էր կատարում:

Ղամարի խերն ու ախպերը Ղամարի անունով ին հորթում ուտում, էնքան որ լավ աղջիկ էր: Խերն էլ բարի մարթ էր: Ամեն օր ժամ էր էթում, աղոթք էր անում, բարի գործեր էր կատարում, բարի համբավ ուներ:

Խերը փարք էր տալում Աստուն, որ Աստրվածծ հիրանը լավ աղջիկ ու տղա ա պարքևել:

Տղեն էլ աշխատող տղա էր, քվորն էլ աշխարքի չափ սիրում էր: Հուր որ էթեր, քվերը մե նվեր կըբերեր: Էս քաղաքի մե ջահել տերդեր, որ ըստոնց հարևանն էր, աչկ էր դրե Ղամարին: Մե սատանություն ա մտածում, որ Ղամարին ձեռ քցա: Մե օր էլ Ղամարի խորն ասում ա, որ չուտ գա ժամը: Դռանը նստեն, մինչև զանգերը տալը խոսան: Խերը գալում ա:

Որ նստան ժամի դռան քարերին, տերդերն ասավ.—Օրչնվա՛ծ, դու էդքան բարի մարթ ես, քո բարության ձենը խասեր ա Հնդստան, բա էս մե գործը հընչի՞ չես կատարում, որ դրախտի փայ դառնաս:

—Ի՞նչ գործ, տե՛ր հայր, ասա՛, կատարեմ:

—Քո նման մարթիք Երուսաղեմ են էթում, Քրիստոսի գերեզմանն են համփուրում, մուխսի են դառնում, դու հընչի՞ էդ բանը չես անում: Դու էլ գնա Երուսաղեմ, տղիտ էլ տար, էրկուսով էլ մուխսի՛ դարցեք էկեք, ի՞նչ դժվար բան ա:

—Տե՛ր հայր, էտ բանը հեչ մտքովս չի հընցե, հէսօր տղիս խետ կըխոսամ, մասլաթ անենք, հէքուց քեզի մե բան կասեմ, տղա ա, կարող ա չի ուզում քվորը մենակ թողա:

Տերդերի միտքն էն ա, որ էրկսին էլ հեռացնա, որ աղջիկը մի-նակ մնա, սիրտ տալով ասավ.—Բա ես ըստեղ չե՞մ, հընչի՞ ա մե-նակ մնում, աղջկաս կդրկեմ, կէթա մոտը կըքնի, մի՛ վախեցի, խե՛ր օխնած:

—Վախենալը չեմ վախենում, հըմա տղա ա, ասավ. «Իմ քուրը մենակ չեմ թողի», հո զոռով չեմ տանի:

—Զոռով տար, թո աչխարք տենա, մարթ ճանչնա, որ աչքերը բացվի, դու հիրանը էտ տեսակ ասա:

Խերը որ ասավ, թե էթանք Հերուսաղեմ, տղեն հելավ աստ-վորով: Դե ջահել ա, ջահելը ման գալ կուզա, քաղաքներ տենալ կուզա:

—Էթանք, հայրի՛կ, էթանք,—ասավ տղեն,—տերդերը դուզ ա ասում, բարի խորուրթ ա տալում: Ես քսան տարեկան եմ, մեր քաղքից դարի, հուրիչ քաղաք չեմ տեսե:

Տեսավ, որ տղեն համաձայն ա, պադրաստվան ճամբա հընգնե-լու: Էթալու օրը տերդերը ճամբեն օխնեց, բարով-խերով ետ գալ ցանգացավ, ասավ, որ աղջկա, տանտեղի մասին արխային հըլնեն:

Խեր ու տղա ամենքը մե էչ նստան, գացին:

Էլի գնացող կար՝ ոտավոր, էչավոր, գացին:

Տերդերն ասեր էր, որ էթալ-գալը մե ամիս կըքաչա, էթացող-ներ ասին, որ իրեք ամսվա ճամբա ա:

—Ձեր տերդերը սութ ա ասե, ա՛յ մարթ: Ես իրեք անքամ եմ գացե-էկե,—ասավ մեկը:

—Մեր տերդերը սուրփ ա, էտենց բան մի՛ ասա:

—Ա՛յ մարթ, ինչքա՞ն միամիտ ես: Աչխարքը տերդերներին սա-տանա ա ասում, դու ասում ես՝ սուրփ ա:

Թո ըստոնք էթան Հերուսաղեմ, մենք տենանք՝ տերդերն ինչ բանի ա: Սատանեն մտեր ա տերդերի փորը: Աղջկան համոզում ա, թե պտի գլոխ տաս, իմ ասածը չըմերժես, ես սուրփ եմ, Աստված էտենց ա կամեցե:

—Դու որ գլոխ չըտաս, ա՛յ աղջիկ, Աստված քեզի էնենց պա-տիժ կըտա, որ էլ չես պրծնի: Կարող ա բերանտ ծռվի, վրետ բոր թափի, կարող ա խերտ ու ախպերտ ետ չըգան, Աստու բան ա, քննել չի հըլնի: Գլոխտ խե՛լք հաֆկա, Աստու ճամբից դուս մի՛ արի: Ես Աստուն էլ բդի պատասխան տամ, քո խորն ու ախպորն էլ: Հընչի՞ ես ուզում, որ ամոթով մնամ:

—Տերդե՛ր, գա՛տը գնա, աչխարքով մեկ կըխայտառակեմ:

—Լեզուտ կըլալկվի, չես կանա, որ խոսաս:

—Թո լալկվեմ, գա՛տը գնա:

—Աչկտ կըքոռնա, ոտտ կըթուլնա, չես կանա ասի, խոսա, լավ հիմացի, որ կանիծեմ, անեծքս կըբռնա:

—Ասում եմ, կորի՛, հռա՛դ հելի, ես քո ասածներից չեմ,—ասավ աղջիկն ու փետը վերցուց:

Տերդերը տեսավ, որ բան դուս չի գա, աղջիկը հիրա խոսկին հաստատ ա, ասավ.—Դե լավ, տենանք՝ մեզնից որը կըփոչմնի: Էնենց օրը գցեմ, որ գաս ոտս պաչես:

Տերդերը գնաց: Աղջիկը հարևանի կնգան բան չասավ, հըմա աղաչեց, որ մենակ վախենում ա, թո հիրանց աղջիկը հիրկունները գա, մոտը քնի:

Հարևանի կնիկը համաձայնվավ:

Տերդերը գնաց տուն, նստավ մե հերկեն նամակ գրեց էս աղջկա խորն ու ախպորը, որ ձեր աղջիկը դուսհընգած ա, նամուսը կորցրեր ա, տունը դարցրեր ա անառականոց: Նամակը գնացող մե վաճառականի խետ հղրկեց, բերանացի էլ հազար բան ասավ: Վաճառականը համոզվավ ու խոսկ տվեց, որ նամակը չուտ կըխասցնա:

Նամակը որ ստացան, խեր ու ախպեր մտքի մեջ հընգան. «Թե մեր Ղամարն ա, էտենց բան չըբդի անա, տերդերն էլ սութ չի գրա, էստեղ մե բան կա»:

Տղեն ասավ.—Հայրի՛կ, դու քո ճամբեն չարունակա՛, ես ետ կըդառնամ: Էթամ էտ անամոթին վերչ տամ, որ մեր հայրական տունը չըխայտառակա: Էրկու ամիս էլ չըկարցավ հիրանը պախա: Ես իմ ձեռով դատը կանեմ:

Էս տղեն էրկու ամսվա գացած ճամբեն մե ամսվա մեչ էկավ: Էլ քվորը բան չըխառցրեց, խանչալը քաչեց, որ սպանա, հըմա ձեռները դողում են:

Քուրն ասավ.—Ախպե՛ր ջան, իմ արունը քեզի խալալ ա: Մեր տունը սուրփ տուն ա, արուն մի՛ թափա, էթանք մեչեն, սպանա՛, ե՛տ դարցի, արի՛ տունը:

Տղեն քվորը քցեց հառեչը, տարավ: Խետը չի խոսում, բան չի խառցնում: Էս տղեն քվորը չատ էր ուզում[16], ձեռը չըգնաց, որ սպանա:

Քուրն էլ չըխառցուց, թե հընչի՞ ա ուզում սպանա: Քվորը դրեց մե մեչոքի մեչ, բերանը կապեց, քցեց մե ծառի տակ, հինքը էկավ տուն: Տերդերը որ լսաց, թե ախպերն էկեր ա, էկավ ախպոր գլոխը հազար սթով լցեց, հըմա հարևանի աղջիկն ասավ, որ հինքը ամեն օր Ղամարի մոտ ա հելե, Ղամարը լավ աղջիկ ա: Ախպերը կասկածի մեչ հընգավ: Գնաց մեչեն, որ քվորը բերա, տեսավ քուր

16 Սիրում (Ծ.Բ.):

չըկա: Ախպոր էթալուց հետո Ղամարը տեսավ, որ ձեն-ձուն չը-կա, ներսից մեչոքը ճղեց, դուս էկավ ու լալով գնաց: Չի հիմանում, թե հուր ա էթում: Մութն հընգնում էր: Գազաններից վախենում էր, հելավ մե ծառի նստավ: Հիրան փեչերը կապեց մե ճղից, մեկէլ ճղերից բռնեց, հա նստավ, հա դանթաց, չուրի լուսը բացվավ: Քա-նի՞ անքամ քիչ էր մնում հընգներ ջնչխվեր, էլի հիրանը պախում էր: Լուսը որ բացվավ, արևը դուս էկավ, մե բառոժ տեղ պարկավ: Պարկելն ու քնելը մեկ հելավ:

Շատ էր քնե, քիչ, Աստված գիդա, մեկ էլ շների խաչոց հընգավ անգամը: Վեր թռավ, տեսավ, որ շները հիրանը չափռներ են, քիչ ա մնում մոտնան ու հազար կտոր անեն: Որ նստավ, շները կայնան, էլ չըմոտցան: Հիմանում էր, որ շները նստուկ մարթին չեն մոտնում, հըմա չեն թողում, որ տեղից հիրար գա:

Շների տերը, որ տեսավ, չուտ ձինը քչեց, շներին ետ տվեց, տե-սավ, որ մե շատ խորոտ աղջիկ ա նստողը: Խոսցուց, աղջիկը չըխո-սաց: Մտածեց, որ հիրա լեզուն չըխասկցավ: Ինչ լեզու որ հիմա-նում էր, էտ լեզվով ասավ: «Դու ո՞րն ես, անունտ ի՞նչ ա», աղջիկը ձեն չարավ: Տղեն մեկ մտածեց՝ կարող ա սատանա յա ջադու ա, մեկ էլ մտածեց, որ սատանեն յա ջադուն էտքան խորոտ չեն հըլնի, կա-չըկա, էսի լալ ա:

Էտ տղեն, էտ երգրի թաքավորի տղեն էր: Սիրահարվավ էտ աղջկա վրեն:

Թևից բռնեց, կայնցուց, ասավ.—Էթանք մեր տունը, Աստված քեզի հղրկեր ա, որ դու դառնաս իմ տանտիրուհին, եթե ցանգա-նաս, թե որ հոժար չես հըլնի, էլի քեզի անտեր չեմ թողի:

Աղջիկը ձեն չարավ, տղի խետ կող կողի գացին: Աղջկան բերեց պալատը, մե հատուկ օթաղ տվեց, ղարավաչ նչանակեց, հրամա-յեց, որ հինքն ինչ ուտում ա, էն ճաշից տան ուտա, ղազնաչուն էլ կանչեց, ասավ, որ աղջկան լավ-լավ չորեր առնեն, ոսկե բլազուկ-ներ, ոսկե քամար, ոսկե գնդեր, բերեն զարթարեն:

Թաքավորը որ հիմացավ տղեն լալ աղջիկ ա բերե, ասավ, որ մեղք ա, ղազերը տան, տանա պախա, մե կտոր խաց աչխատա, աբրի:

—Չէ՛, հայրի՛կ, ղազերը չի տանա:

—Բա լալ աղջիկը ի՞նչ կանա, ա՛յ տղա, հո թաքուհի չի դառնա, նստի պալատը, մե էրկսին էլ ղարավաչ անա:

—Հայրի՛կ, լալ ա, հըմա ղազարած չի դառնա, իմ սիրտը կպեր ա էտ աղջկան:

Թաքավորը ծծղաց, ասավ.—Սերը աթարին կպավ, չըպրծավ, քո սերն էլ լալի՞ն կպավ:

—Հայրի՛կ, էտ աղջկան Աստված ա հղրկե: Էտի իմ բաժինն ա, իմը կա-չըկա, էտ ա,—ու գնաց հիրա օթաղը:

Թաքավորն էլ չըխոսաց, հընգավ մտածմունքի մեչ:

Թաքուհու խետ խոսաց, Թաքուհին ամ արավ, հըմա ասավ.—Թաքավո՛ր, էտի մեր մինուճար տղեն ա, թո հիրա ուզածով հըլնի, բան մի՛ ասա, մի՛ մերժա:

—Գլոխը քարը, ինչ ուզում ա, թո անա,—ասավ Թաքավորը:

Մտածեց, գնաց էկավ, ջղայնությունից սիրտը պադռում ա, ետ դարցավ կնգա յանը, ասավ.—Լա՛վ, Թաքուհի՛, քո խոսկը չեմ մերժում, հըմա հիմացի՛, որ վազիրը, վաքիլը, բահրադարը աղջիկ ունեն, բոլորի աչկը քո տղի վրեն ա, հէքուց տեսան, որ չոլից բռնած մե լալի ա առե, հիրանցը բանի տեղ չի դրե, խոսկները մեկ կանեն, Թաքավորությանն էլ, հիրանն էլ վերչ կըտան, տենան՝ էս բանին ո՞նց պատասխան կըտա քո տղեն: Էս բանը, լա՛վ հիմացի, կըկատարվի:

Թաքուհին էս խոսկերից վախեցավ: Կանչեցին տղին ու ասին, որ էսենց բան էլ կըպատահի:

—Ես իմ կնիկը կառնեմ կէթամ, դու քո Թաքավորությունն արա՛, մի՛ վախեցի, հայրի՛կ:

Տեսան, որ Թաքավորությունից հրաժարվում ա, հըմա լալից չի հրաժարվում, էլ բան չասին, բերին ըտոնցը պսակին ու սկվան: Խարսն անուն էլ չուներ: Ի՞նչ անուն տան: Հիրա անունն էլ չի ասում:

Մե անքամ Թաքավորի տղեն հիրկվա մթնով կնգան առավ, գնաց ման գալու: Լուսնակ գիշեր էր:

Կնգան ասավ.—Անունդ ասա՛, որ հիմանանք, ախր անուն չունես, լավ չի:

Կնիկն ասավ՝ Ղամ, ու ձեռով նշանց տվեց լուսնակը:

—Ղամա՞ր,—խարցուց Թաքավորի տղեն:

Աղջիկը գլխով համաձայնության նշան արավ:

—Անունդ Ղամա՞ր[17] ա, ինչքա՜ն լավ անուն ա, ես քո անունին մատաղ, դու երգնքի ղամարից էլ լավն ես, երգնքի ղամարը քո մոտ հեչ ա:

Կնիկը լսում էր, ժպտում էր, մարթը հերեսներն էր պաչում: Ուրախ-ուրախ տուն էկան, տղեն խորն ու մորն ասավ, որ կնգա անունը Ղամար ա:

Թաքավորի մտածածը չըկատարվավ: Վազիրը, վաքիլն ու բահրադարը չըմիացան Թաքավորի դեմ: Ամեն մեկը վախենում էր, որ

17 Ղամար - արաբերեն՝ լուսնյակ (Ծ.Բ.):

Թաքավորի տղեն, որ առնի էլ, մեկի աղջիկը բդի առնի, էն էրկուսին կըճնեն, էս Թաքավորն էլ բարի Թաքավոր ա, Թո Թաքավորի արածով հըլնի:

Էսենց խաղաղ հընցավ չորս տարի: Էտ ժամանակվա մեչ Ղամարը էրկու տղա բերեց: Ինչ տղերք, ամեքը մե ազրայել:

Թաքավորն էլ, Թաքուհին էլ ուրախ ին, որ էտենց Թոռներ ունեն: Տղեն էլ կնգան հառաչվանից հավելի էր սիրում: Դարդը էլի Թաքավորի տղի սրտի մեչ էր, որ կնիկը լալ ա, ջայռեքը գոխտուկ ծծղում են, Լալ Ղամար են ասում կնգան:

Մե օր Թաքավորի տղեն դարդը պատմեց հընգերոջը:

Հընգերը խելոք մարթ էր, ասավ.—Թաքավորի՛ տղա, կարող ա պատահի, որ քո կնիկը լալ չի, մե դարդ ունի, դաստու լալության ա դրե, որ դարդը ոչ մեկի չասա: Որ իմ խորուրթը լսաս, էս տեսակ մե բան կանես: Պադրաստել տուր էրկու ոսկե խնձոր: Տա՛ր տուն, մեկը ջեբտ պախա՛, մեկը տո՛ւր պստի տղիտ: Դու պախկզի՛: Մեծը կըգա ձեռից կառնի, պստիկը կըլա: Մերը կըգա էրեխեքին հաչտեցնա, կարող ա, որ խոսա: Որ խոսաց, դու ջեբիցտ կըխանես մեկէլ խնձորը, կըտաս էրեխին, էլ կնգատ բաց չըթողես, խոսցո՛ւ:

Թաքավորի տղեն արավ, ոնց որ հընգերն ասեր էր: Խնձորը տվեց պստիկին, հինքը մտավ դռան հետևը: Մեծը որ ձեռից առավ, պստիկը ճվաց: Մերը վազավ:

Տեսավ, որ մարթը դուս ա գացե, ասավ.—Վա՜յ, Թաքավորի՛ տղա, բա չըմտածեցի՞ր որ էրեխեքը կըկռվեն, ոսկի չըկա՞ր, որ էրկու խնձոր չինել տիր:

Թաքավորի տղեն դռան հետևից դուս էկավ, կնգա թևը բռնեց, փաթթվեց կնգան, ասավ.—Ես քո լեզվին մատաղ, Ղամա՛ր, առ էս խնձորն էլ քո ձեռով տո՛ւր, Թո չըլա:

Ղամարը մնաց չիվար, էլ չի կանում խոսա, Թուլցավ, հընգավ մարթի թևերի վրեն:

—Խոսա, Ղամա՛ր ջան, խոսա՛, ընձի մի՛ տանջա, խորս ու մորս մի՛ տանջա, Թո ջայռա-ղարավաչ քեզի էլ չասեն «Լալ Ղամար»:

Էտ օրվանից Թաքավորի պալատի մեչ ուրախություն էր: Հիմացան, որ Ղամարի լեզուն բացվեր ա: Ղամարը խոսում էր, հըմա հիրա մասին բան չէր ասում:

Թաքավորի տղեն խնթրում, աղաչում ա, որ Ղամարը ասա, Թե հընչի՞ ա ուԹ տարի լալության դրե, էրևում ա մե պաճառ կա, հարգավոր ա պաճառն ասել:

—Դե լավ, Թաքավորի՛ տղա, որ էտքան դեմ ես հընդնում, կասեմ, հըմա Թո սիրտտ չըկոդրի, որ քո կնիկը Թաքավորի աղջիկ չի,

մե հասարակ մուխսու աղջիկ ա, էն էլ տանից դուս արած, անո-թի-ծարավ:

—Ղամա՛ր, իմ սիրտը քեզի կպեր ա, դու թաքավորի, նազիր-վազիրի աղջիկներից էլ լավ ես, ասա՛:

Ղամարը պատմեց, թե ինչ օյին ա էկե հիրա գլոխը: Ոչ մե բան չըպախեց, ոնց որ ես ասեցի, էնենց էլ Ղամարը պատմեց:

—Ես մտածում ի, որ իմ ասածին մեկ ա, չեն հավատա, լավն էն ա, դնեմ լալուԹյան, որ ոչ մեկը չըխարցնա էտ մասին, ես էլ ոչ մեկի չասեմ իմ դարդը: Թո ես իմ դարդով վառվեմ, խորովվեմ:

Թաքավորի տղեն խելոք, խասկցող տղա էր, լսաց, ա՜խ քաշեց, լացավ ու մտածեց, թե ինչ ա կատարվում թաքավորուԹյան մեչ:

ՊատմուԹյունը որ վերչացրեց, թաքավորի տղեն ասավ.—Ղա-մա՛ր, էսքան տարի խորտ ու ախպորտ չես տեսե, դու ընդոնց ես կարոտցե, հիմի ընդոնք էլ քո դարդով են տանջվում, արի էԹանք քո խորն ու ախպորը տենանք, ես էլ կըծանոԹնամ, կըտենան, որ դու անմեղ ես, մեղավորը տերդերն ա:

—էԹանք,—ասավ Ղամարը,—ես հոժար եմ:

—Դու հինքդ ստուգա՛, տե՛ս, որ ես հըմմեն բան տեղին ասեր եմ, ոչ մե բան չեմ Թողե, սուԹ չեմ ասե:

ՊադրաստուԹյուն տեսան, որ էԹան, էրեխեքին էլ տանեն, որ քեռին ու պապիկը տենան:

Հենց էտ ժամանակ խաբար էկավ, թե էսինչ երգրի թաքավորը ղոչունով, Թոփ-ջաբախանով հարցակվեր ա հիրանց երգրի վրեն: էԹալու գործը խանգարվում էր, քանի որ բահրադարի խետ բդի թաքավորի տղեն էլ էԹեր կռիվ: Վազիր-վաքլի միտքն էլ էն էր, որ թաքավորի տղեն էԹա սպանվի, թաքավորն էլ ժառանգ չի ու-նենա, հիրանցից մեկի տղեն կըդառնա թաքավոր:

Էս բանը թաքավորի տղին գաղտնի ասող հելավ, հըմա թաքա-վորի տղեն ասավ.—ԹաքավորուԹյունը իմն ա, ես էլ պարտավոր եմ պաչտպանել, ես կէԹամ կռիվ:

Ղամարն ասավ, որ էլ խերանց տուն չի էԹա, կըմնա, կռիվը կը-վերչանա, հետո կէԹան էրկսով:

Թաքավորի տղեն ասավ.—Ղամա՛ր, դու վերցո՛ւ էրեխեքին, վազիրն էլ հարուր սալդաԹ կըվերցա, կէԹաք:

—Թաքավորի՛ տղա, իմ սրտին վկայում ա, որ մե փորցանք ա պատահելու, թե որ դու չըգաս: Քո խոսկը ես չեմ մերժում, արի հոժարվի՛, կռվից հետո էԹանք: Քո էրեխեքին խեղճ արի, պստի անմեղ գառներ են:

—Վազիրը մեր հավադարիմ մարԹն ա, մի՛ վախեցի:

—Փորցանքը վազիրից կըգա: Արի քարը քո փեչից թափա՛, հոժարվի՛, որ ես չէթամ: Ես տենում եմ, որ վազիրը լավ մարթ չի:

—Վազիրը լավ մարթ ա, մի՛ վախեցի: Առանց մե փորցանքի կէթաս, կըգաս:

—Ես իմ ասելիքն ասեցի, մնացածը քո գործն ա,—ասավ Ղամարն ու լացավ:

Թաքավորի տղեն հիրա ասածն արավ: Կնգան ու էրեխեքին վազրի խետ հղրկեց աներանց տունը, հինքը գնաց կռիվ: Հիմի տենանք, թե ինչ սատանա ա մտե վազրի փորը: Էս անխիղճ մարթը հիրա մտքի մեչն ասում ա. «Ես տղամարթ հըլնեմ, էնքան էլ ծեր չեմ, էսքան խորոտ ջահել կնիկը օրերով ճամբա տանեմ, ձեռ չըտա՞մ: Կըհառաչարկեմ, որ գլոխներս մեկ անենք: Ջեմ-չում կանա, հետո կըհոժարվի: Կնիկ ա, էլի, հո քարից չի՞ չինուկ: Որ կնիկն ա մացե հիրա խոսկի տերը, որ էսի մնա;

Վազիրը էս մտքի խետ հառեչ հընգավ: Մտան մե մեչա: Մե հարմար տեղ ձիանից հիչավ, Թաքավորի խառսին հիրա ձեռով հիչցուց, գրկեց, դրեց գետինը, սալդաթներին հրամայեց, որ չադրներ զարկեն, Թաքավորի խառսի չադրն էլ զարկեն հիրա չադրի կողը: Ախար միտքը ծուռն էր: Կերան, խման, քնան: Հըմա վազիրի քունը չի տանում, փորն օց ա մտե:

Տեսավ, որ խախնդավ, բոլորը քնան, հինքը յավաչ հելավ, գոխտուկ մտավ խառսի չադրը: Թաքավորի խառսը խասկցեր էր վազիրի միտքը:

—Վազի՛ր, թո՛ղ, գնա՛ տեղտ, ես քո ասած կնանիքից չեմ, կըճվամ, բոլորը կըզարթնեն, ես էլ, դու էլ խայտառակ կըհըլնենք: Էտ օցը փորիցտ խա՞ն:

Վազիրն էլ մտածում ա, որ կնիկ ա, էտենց կասա, կասա, ձենը կըկդրա, խասավ գրկեց:

Ասավ.—Ղամա՛ր, քո սերից խելքս գլխիցս թռեր ա, ինչ ուզում ես, արա՛, ինչ ուզում ես, ասա՛, հըմա պտի գլոխներս մեկ անենք:

—Էդ բանը հըլնելու բան չի, վազի՛ր, թո՛ղ, գնա՛:

—Ղամա՛ր, զինվորներին ես եմ ջոկե: Բոլորը իմ ուզած մարթիք են, սո՛ւս կաց, կամքս կատարեմ, էթամ իմ չադրը: Թե որ չըհոժարվես, քեզ էլ, էրեխեքիտ էլ կըմորթեմ, կէթամ մարթիտ կասեմ, որ մեր վրեն զորք հարցակվավ, կնգատ ու էրեխեքիտ մորթին:

—Ուզում ես՝ մորթա՛, ուզում ես՝ թո՛ղ, էտ բանը գլոխ գալու բան չի: Էսի իմ վերչի խոսկն ա:

Վազիրը տեսավ, որ չէ, կամավոր գործը գլոխ չի գա, թուրը քաշեց ջոչ տղի վիզը կդրեց:

—Հիմի ի՞նչ ես ասում, Ղամա՛ր:

—Էն եմ ասում, որ քո արածը չես մարսի, ու քո կամքը չի կատարվի, չո՛ւն, անխի՛ղճ, անաստվա՛ծ:

—Մեկէլին էլ կըսպանեմ, քո էրեխին մե՛ղք արի:

—Սպանա՛, արնախո՛ւմ գազան:

Մեկէլին էլ սպանեց:

—Քեզ էլ կըսպանեմ, հոժարվի՛:

Թաքավորի խառսն ասավ.—Վազի՛ր, տենում եմ, որ քո խոսկի տերն ես, ջանը քախծր ա, հոժար եմ, հըմա թող դուս գամ, ջուր թափեմ ետ գամ, էն վախտը ինչ ուզում ես, արա՛:

Վազիրը կապը դրեց թաքավորի խառսի ոտը: Մե ծերից հինքը բռնեց, ասավ՝ դե գնա: Ղամարը դուս էկավ, մտցավ մե ծառի, չվանի ծերը կապեց մե ծառից, հինքը յավաչ սկավ մեչի մեչը: Վազիրը կապը յավաչ քաչում ա, տենում ա, որ ձգվում ա: Մեկ էլ, որ թափով քաչեց, կապը կդրվավ: Դուս էկավ, տեսավ ծառից ա կապուկ, հինքը չըկա: Դես-դեն ձեն տվեց, թաքավորի՛ խառս, հո՞ւր ես, ձե՛ն տուր, պատասխան չըկա: Նոր գլխի հընգավ, որ խափեր ա, փախեր ա:

Հավարը քցեց, որ թաքավորի խառսը տղերքին մորթեր ա, փախեր ա: Զինվորները հելան, չանքի լուս ման էկան, թաքավորի խառս չըկա:

Տեսան, որ չեն քթնում, վազիրն ասավ՝ ետ դառնանք:

Ետ դառցան, գնացին դուզը կռվի դաշտ: Տեսան, որ կռվի թունդ ժամանակն ա: Հիրանք էլ սկսեցին կռվել: Հիրկունը, որ կռիվը խախանդավ, էկան թաքավորի տղի մոտ:

Թաքավորի տղեն նոր էտ ժամանակ ասավ.—Էս ի՞նչ բան ա, վազի՛ր, վախեցար ես չախտեմ մեր դուշմանին, սիրտտ չըհամփերե՞ց, կնգաս չըտարա՞ր խոր տունը:

—Է՜, թաքավորի՛ տղա, խեր-խաբար չեմ բերե,—ու սկսեց լացը: Կեղծ լաց, արսունք կըգա՞:

—Ի՞նչ ա պատահե, վազի՛ր, չո՛ւտ ասա:

—Թաքավորի՛ տղա, գացինք այսինչ մեչեն: Ջրի կրաղը չադր զարկինք, որ գիչերը մնանք, դինջնանք, հառավոտը մեր ճամբեն չարունակենք: Հառավոտը հելանք, ձեն եմ տալում, որ՝ թաքավորի՛ խառս, վեր կաց էրեխեքին խաքցրո՛ւ, խա՛ց տուր, թո ուտեն, որ էթանք: Տենամ՝ ձեն չըկա: Մոտցա, մեկ էլ ձեն տվի: Պատասխան չըկա: Դռան փառդեն բացեմ, ի՞նչ տենամ, իմ դուշմանին ռաստ չըգա: Էրկու էրեխեն՝ մոռթուկ, արունլվա, հինքը չըկա: Սաղ մեչեն ստուգինք, ոտի տակ տվինք, չըկա: Էրեխեքը թաղինք մե ծառի տակ, չուտ էկա, որ իմ թաքավորի տղին ծառայեմ, կռվի մեչ սպանվեմ, որ էս դարդից պրծնեմ: Էն էլ Աստված հոքիս չառավ: Իմ

խերը, ես էսքան հավադարիմ ծառայեցինք մեր թաքավորին, վերչը էսենց անբախտության թուչ էկանք: Հըմա, թաքավորի՛ տղա, էտ ախճիկը մեչից բռնած էր, իմ կարծիքով կախարթ էր: Թե չէ ո՞վ ա տեսե, որ հարազատ մերն հիրա էրեխեքին սպանա ու փախնի:

Թաքավորի տղեն գլոխը տարավ, բերեց, բան չասավ:

Կռիվը մե տարի քաշեց:

Մե տարի հետո, որ կռիվը վերջացավ, թաքվորի տղեն ախտեց ու տուն էկավ, էտ վախտը վազիրին ասավ.—Վազի՛ր, ես հավատում եմ, որ դու դուզ ես ասում, հըմա արի էթանք ման գանք, իմ էրեխեքի գերեզմանը տենամ, մեչու էլ խառց-փոռց անենք, կարող ա էտ կախարթին քթնենք, սպանենք, էլի ետ գանք, մեր թաքավորության գործով զբաղվենք:

Վազիրը մտածեց, որ հիրա հավադարիմ մարթկանց վերցու, մե տեղ էլ թաքավորի տղին սպանա, ետ գա ծեր թաքավորին էլ սպանա, հինքը դառնա թաքավոր:

Էտ մտկով էլ ասավ.—Թաքավորի՛ տղա, մինակ էրկուսով էթանք, վտանգավոր ա, ես ջոկեմ, տասը մարթ էլ վերցունք էթանք:

—Զէ՛,—ասավ թաքավորի տղեն,—խմբով էթալն ա վտանգավոր, ավազակի թուչ կըգանք, կռիվ կանենք, իսկ որ ախկատի չոր խաքնենք, էթանք, մեզի բան ասող չի հըլնի: Ոնչ մեկը մեզի ձեռ չի տա:

Վազիրը ձեն չարավ, հըմա ախը սրտի մեչն ա, վախենում ա, հանգարց ռաստ գան թաքավորի խառսին, էն վախտը վայ հիրանը (վազրին[18]):

Էս էրկուսով մե տոբրակ ոսկի վերցին, փաթթին մե քոչ, խին չորի մեչ, հընգան ճամբա:

Թո ըստոնք էթան հիրանց ճամբով, մենք խաբարը տանք Լալ Ղամարից:

Լալ Ղամարը փախավ, ռաստ էկավ մե չայի:

Հիրանը քցեց ջուրը, որ մեռնի, դարդից պրծնի: Ջուրը ղժավ էր, Ղամարին տարավ, մե տեղ դուս բերեց կրաղը: Գնաց մե ծառի տակ նստավ: Սալդաթներն էկան էտ տեղը, հըմա թաքավորի խառսին չըտեսան: Ջուրը էս կնգան քչել էր մեկէլ ղրաղը, սալդաթները ջուրը չըմտան:

Կեսօրին էր, չորերն էր չորցնում, մեկ էլ տեսավ, էլի էկան մե քանի սալդաթ: Շուտ փախավ, մտավ մե ծառի փչակ: Սալդաթները էկան էտ ծառի կողով հընցան գացին: Որ գացին, ոտների ձենը կդրվավ, դուս էկավ, տեսավ, որ շատ հեռացեր են: Հինքը ճամ-

18 Ծ.Ա.:

բեն ծռեց, գնաց մե հուրիչ յան: Աչնան մոտ էր: Ծառների տակից տանձ, խնձոր, գուզ հաֆկելով, ուտելով էթում էր: Մութն հընգավ, տեսավ, որ մե կրակ ա էրևում: Գնաց էտ կրակի յանը: Գնաց, գնաց, տեսավ 40 հարամի նստեր են, քեֆ են անում: Էլ ետ դառնալ չըկառցավ, հիրանը տեսան: Գնաց բարևավ, կայնավ: Հարամի բաչին տեսավ, որ խորոտ ա, թաքավորի լայեղ օղլուչաղ ա, կանչեց հիրա մոտը նստցուց:

Կերցրին, խմցրին, հետո հարամի բաչին ասավ.—Դե հիմի ասա՛, տենանք, գալտ որդեղի՞ց ա, չըհըլնի՞, թե քեզի հղրկեր են մեզի մատնելու: Դուզը չասես, գլոխտ կըկդրենք, դուզն ասես, մեզնից որ մեկին խավնես, կըպսակենք, կըդառնաս մեր ախպոր կնիկը ու մեր խառսը, մեր աչկի լուսը:

Թաքավորի խառսն ասավ.—Սպանեք, չըսպանեք, ես իմ սրտի գաղտնիքը չեմ ասի, բոլորիտ քուրը կըդառնամ, ես մարթ ունեմ:

Մե յափունջի տվին, ասին.—Ա՛յ քուր, ա՛ռ էս յափունջին, պարկի քնի՛, ցուրտ ա, առանց յափունջու կըմրսես:

Հիրանց հընգերներից չորս յանը պահակ նչանակեցին ու քնան: Աղջկան բան չասին:

Հառավոտը որ լուսը բացվավ, ասին.—Քո՛ւր, հիմի ի՞նչ ես ասում, մնում ես մեր մոտը, թե՞ էթում ես:

Թաքավորի խառսն ասավ.—Ախպերնե՛ր ջան, տեղն հընգավ, ես ձեզի կօքտեմ, հըմա հիմի խնթրում եմ ընձի տանեք մե գեղի մոտ, դուք թողեք հեռանաք: Մե օր կարող ա ռաստ գանք, ո՞վ ա հիմանում, Ասսու բան ա, անքննելի ա:

—Ասսու բան ա, քո՛ւր ջան,—ասավ հարամի բաչին,—հըմա քո գաղտնիքի կեսը մեզի հայդնի ա: Ջես ասում, մի՛ ասա: Ոնց որ ուզում ես, թո քո ասածով ըլնի:

—Ի՞նչ ա հայդնի իմ գաղտնիքից, ախպե՛ր ջան:

—Էն ա հայդնի, որ դու քնի մեչ ասում իր. «Մի՛ սպանա, վազի՛ր, էրեխս մի՛ սպանա»: Թե որ համաձայն ես, մերոնցից մեկը թո հիրա ավազակի չորերը դեն քցա, քեզի պահապան դառնա, ոնց որ քո ախպերը: Թե որ քեզի բան ասա, մենք հիրա գլոխը կըկդրենք, մեր ձեռից չի պրծնի:

Մե խոսկով, թաքավորի աղջիկն ու ավազակներից մեկը գնացին մե գեղ, ավազակը դառցավ չորան, աղջիկն էլ քյաչալի ղըլլըղ մտավ, դառցավ ղազարած: Էրկուսն էլ՝ մե հարուստ մարթի մոտ:

Ղազարածն ամեն օր ղազերը տուն ա բերում, հետո էթում ա չորանին ա օքտում, ոխճարը տեղավորում են ու էթում հիրանց քոնձաղների մեչը քնում:

Ախճիկը չոբանի քոնձաղը մաքրում ա, ճաչն էփում, չոբանի չորերը լվում, հըմա քուր ու ախպեր են: Էրկու տարի էս մարթի մոտը աբրան: Հարուստը ըստոնցից էր չնորակալ, ըստոնք էլ՝ հարուստից:

Մե օր էլ թաքավորի խառսը ղազերն էր տարել չայի կրաղը, հիրկվա յանը, մեկ էլ տեսավ հիրա մարթն ու վազիրը, ախկատի ղըլլըղ մտած, վազրի թևի տակը մե խին չոր գունդ արած, էկան:

Որ ղազարածին տեսան, մոտցան, բարև տվին, թաքավորի տղեն ասավ.—Ղազարա՛ծ, օտար մարթ ենք, ծանոթ չունենք, չե՞ս կանա մե մարթի անուն ասես, էթանք էտ մարթի տունը, էսօր մնանք, հէքուց մեր ճամբեն չարունակենք:

Ղազարածն ասավ հիրա խազեինի անունը: Ըստոնք գացին ղազարածի խազեինի տունը, ղոնախ հելան: Տանտերը ըստոնցը չատ լավ ընթունեց: Բերեց ոխճար մորթեց, ղազ մորթեց, խորոված ու տոլմա էփեցին, արաղ-գինի բերել տվեց, որոշեց լավ քեֆ անել:

Քեֆից հետո էս ղոնախներից մեկին ասավ.—Բարի՛ տանտեր, լավ կըհըլնի, որ մեկը գլխի էկած մե բան պատմա, լսանք, օրը հերկնցնենք:

Տանտերն ասավ.—Կանչեմ իմ չոբանին ու ղազարածին, թե մե բան ասեն, ընդունք ասեն, ես չեմ կանա ձեր խնթիրքը կատարի: Թե որ բան ա, ընդոնք էլ չիմանան, ես գեղից մե մարթ կանչեմ, մե բան կըպատմա:

Ըստոնք որ քեֆ ին անում, ղազարածը չոբանին ասավ, որ մե խանչալ դնա փեչի տակը, հէսօր կարող ա մե բան պատահի: Չոբանը՝ ղաչաղ, արնի կարոտ, խանչալը սրեց, կապեց փեչի տակը ու հետևեց թաքավորի խառսին: Էտ վախտը տանտերը մարթ հղրկեց ըստոնց մոտը: Էկողն ասավ, որ տանտերը ուզում ա հիմանա, թե ձեզնից մեկը կանա՞ գլխի էկած մե բան պատմա, որ ղոնախներին զբաղեցնա;

Թաքավորի խառսն ասավ, որ հինքը կըպատմա, հըմա թո չոբանն էլ գա ներկա հըլնի, առանց չոբանի չի պատմա:

—Տանտերին ասե՛ք, որ էրկու ձի հղրկա ֆլան մոտիկ գեղը, թո տերդերին ու էս ինչ մարթի տղին էլ բերեն, իմ պատմության մեչ էտ էրկու մարթն էլ կապ ունեն:

Տանտիրոչը որ ասին, տանտերը զարմացավ: Հմա թաքավորի տղեն կասկածի մեչ հընգավ: Ախր էտի հիրա անների գեղն ա, տղեն էլ անների տղեն ա:

Ասավ.—Տանտե՛ր, չատ եմ խնդրում, որ էտ էրկու մարթին բերել տաս, մենք կըսպասենք:

Վազիրն էլ չչմեց, չըհրլնի հանգարց գործը բացվի, ասավ թաքավորի տղին:

—Ա՛յ հընգեր, դու ջահել ես, քունտ չի տանում, ես ծեր մարթ եմ, էթամ քնեմ, դուք խոսացեք, ուզում եք, մինչև լուս նստեք:

Վազիրն ուզում էր գլոխը պրծացնա, հմա չըկառցավ: Հղրկեցին տերդերին ու թաքավորի խառսի ախպորը բերին:

Տանտերը կանչեց չորանին ու ղազարածին.

—Ղազարա՛ծ քյաչալ,—ասավ տանտերը,—ես քո բոլոր պահանջները կատարեցի, հըմա որ հետաքրքիր բան չես պատմե, ղազարածությունից կըհեռացնեմ, կըհղրկեմ նախրագնեն փթիր թխելու: Սաղ օրը ձեռներտ կվի մեչ կըհրլնի:

—Ես իմ խոսկի տերն եմ, կըպատմեմ, հետո ինչ ուզում եք, արեք, ես ձեր դատաստանին դուրբան:

Թաքավորի խառսն սկսեց.—Մեր հարևան ֆլան գյուղում կա մե բարեպաշտ մարթ, հիմի շատ ա ծերացե: Էտ մարթն ուներ մե տղա ու մե աղջիկ: Տղեն քվորը շատ էր սիրում: Մե օր էտ գեղի տերդերը կպավ էս բարի մարթի յախեն, թե դու էլ, քո տղեն էլ բդի էթաք Երուսաղեմ, Քրիստոսի գերեզմանը տենաք: Էս մարթը համոզվավ, տղին վերցուց գնաց, աղջկան թողեց տունը և տերդերին ասավ, որ պաշտպանա մինչև հիրանց գալը: Էս տերդերի չնությունը բռնեց, աղջկանից գլոխ ուզեց: Աղջիկը չըհամաձայնվավ: Տերդերը նամակ գրեց աղջկա խորն ու ախպորը, որ ձեր աղջիկը բոզություն ա անում:

Էս որ լսաց, տերդերը լցվավ, ասավ.—Պատվելի՛ մարթիք, էս խելառ ղազարածին դո՛ւս արեք, սութ-սութ բաներ ա ասում:

—Տե՛ր հայր, ձե՞նտ կդրա,—ասավ թաքավորի տղեն,—թո պատմա, տենանք՝ վերչը ի՞նչ ա հրլնում: Պատմա՛, քյաչա՛լ, պատմա՛, հետաքրքիր ա:

Քյաչալը չարունակեց:

Ախպերն էկավ, հըմա չըղիմիչավ քվորն սպանա, տարավ մե մեչի մեչ թողեց, որ գել ու գազանի փայ դառնա: Աղջիկը շատ լացավ, գազաններից վախեցավ, հելավ մե ծառի, ճղերից բռնեց, նստավ: Հառավոտը էտ երգրի թաքավորի տղեն էկավ հախպուրը լվացվելու, աղջկան տեսավ: Աղջիկը հիրանը լալ ձևացրեց, բայց թաքավորի տղեն տարավ, խետը պսակվավ: Լսո՞ւմ եք, ղոնախնե՛ր:

—Ասա՛, ասա՛, լեզվի՛տ մատաղ, հետո՞:

—Հետո վազիրն էս կնգանից գլոխ ուզեց: Չըհամաձայնվավ էտ խառսը: Վազիրը թաքավորի էրկու թոռներին սպանեց, հըմա խառսը փախավ:

Վազիրը չըհամփերեց, խանչալը խանեց, ասավ.—Սութ ես ասում, քյաչա՛լ, հիմի էս խանչալը փորտ կըկոխեմ:

Թաքավորի տղեն վազրի թևից բռնեց:

—Նստի՛ տեղտ, ես էլ խանչալ ունեմ:

Զոբանն ասավ.—Ես էլ ունեմ, չոմախն էլ հավելի:

Վազիրը ձենը կտրեց:

Զոբանը էկավ վազրի թևն օլրեց, խանչալը վերցուց.—Էրևում ա, ա՛յ ղոնախ, լավ մարթ չես: Լսա՛:

Էս աղջիկը էկավ 40 հարամու ձեռ հընգավ, բայց հարամինեը էս աղջկա պատվին չըկպան, բերին մե գեղ, տվին մե հարուստ մարթի ղազարած:

—Էտ ո՞ր գեղն ա, քյաչա՛լ, ասա՛, էտ աղջկան քթնենք:

—Էտ աղջիկն էստեղ ա,—ասավ քյաչալը:

—Հո՞ւր ա, բեր տենանք:

Թաքավորի խառսը գնաց մեկէլ օթաղը: Քյաչալի փոստը դեն քցեց, խաքավ հիրա չորերն, էկավ: Թաքավորի տղեն հելավ, փաթըթվավ կընգան: Վազիրն ու տերդերն ուզեցան փախնեն: Դռան մոտ կայնած չոբանը վազրին խանչալով սպանեց, չոմախով էլ տերդերի գլխին տվեց: Կամիլաֆկեն տերդերի գլխից թռավ: Տերդերն հընգավ: Աղջկա ախպերը ամոթու գլոխը կախե, կայներ էր: Աղջիկը մարթին թողեց, փաթըթվավ ախպորը:

Ըտուց ետը թաքավորի տղեն էս աղջկա պաչտպան չոբանին հղրկեց, որ ավազակները գան հիրանը ղոնախ: Ամեն մեկին մե գործ կըտա:

Տանտիրոջը չնորակալություն հայդնեց, մոտի ոսկին տվեց, վերցուց հիրա կնգան ու աներձաքին, էկավ տուն: Ըստոնք խասան հիրանց մուրազին, դուք էլ խասնեք ձեր մուրազին: